Թիվ ՍնԴ/2481/04/25 սնանկության գործով պարտապան Սուրեն Վարդանի Բաղդասարյանի սնանկության գործով գույքի բաց դասական եղանակով՝ լոտի մեկնարկային գնի հավելմամբ, աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-11-25 15:19:15

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

Թիվ ՍնԴ/2481/04/25 սնանկության գործով 26.09.2025թ. սնանկ ճանաչված Սուրեն Վարդանի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող թվով 1 /մեկ/ շարժական գույքի՝ տրանսպորտային միջոցի, 2026թ. նոյեմբերի 23-ին, ժամը 16:30-ին նշանակված աճուրդը չի կայացել՝ հայտեր չլինելու պատճառով:
2026թ. դեկտեմբերի 10-ին, ժամը 16:30-ին թիվ ՍնԴ/2481/04/25 սնանկության գործով սնանկ ճանաչված պարտապան Սուրեն Վարդանի Բաղդասարյանի (անձնագիր՝ AS0323176, հասցե՝ ք. Երևան, Ա.Իոսիֆյան փող., 5/4 տուն) սնանկության գործով կառավարիչ Ա. Մաթևոսյանի կողմից ք. Երևան, Հանրապետության փողոց, 67 շենք, թիվ 57 գրասենյակային տարածք հասցեում կանցկացվի ՀՀ սնանկության դատարանի 26.09.2025թ.-ի թիվ ՍնԴ/2481/04/25 վճռով սնանկ ճանաչված պարտապան Սուրեն Վարդանի Բաղդասարյանի՝ Դատարանի կողմից հաստատված պարտատերերի պահանջների բավարարման նպատակով, Սուրեն Վարդանի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող թվով 1 /մեկ/ շարժական գույքի՝ տրանսպորտային միջոցի, աճուրդային վաճառքը՝ ներկայացված 1 /մեկ/ լոտով՝ ստորև ներկայացված մեկնարկային գնով:
Լոտ 2. «SUZUKI GSX-R750K» մակնիշի, 2004 թվականի թողարկման, JS1GR7JAX42105508 նույնացման համարով , AC 274 հաշվառման համարանիշի մոտոցիկլ՝ տրանսպորտային միջոց:
Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 01YY383290, տիպը՝ GSX-R750K, տեսակը՝ մոտոցիկլ, թափքը՝ երկանիվ մոտոցիկլ, գույնը՝ սև, շարժիչի տեսակը՝ բենզինային, անիվները՝ վիճակը միջին /մաշվածությամբ/, տեխնիկական վիճակը՝ վատ, նստատեղը՝ պլաստմասե /կոտրված/: Մոտոցիկլետը չի շահագործվում, ունի վնասվածքներ, կոտրված է ցուցիչ վահանակը, պաշտպանիչ վահանը:

Վազքը՝ բացակայում է, ունի վերանորոգման կարիք: Շարժիչի, փոխանցման տուփի, էլեկտրական հանգույցների և սարքավորումների տեխնիկական վիճակի և աշխատանքի վերաբերյալ որևէ երաշխիք չի տրվում:
Առկա են կիրառված սահմանափակումներ:
Լոտ 2-ի մեկնարկային գինն է 263,823 ՀՀ դրամ:
Յուրաքանչյուր չկայացած աճուրդից հետո, հաջորդ աճուրդին՝ կրկնաճուրդին, շարժական գույքի՝ տրանսպորտային միջոցի մեկնարկային գինը /արժեքը/ նվազեցվելու է լոտի արժեքի /գնի/ նախորդ աճուրդի մեկնարկային գնից՝ 20 /քսան/ տոկոսի չափով :
Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝ բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ կարող են աճուրդի մասնակցության հայտ (այսուհետ՝ հայտ) ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի գրասենյակ /հասցե՝ ք. Երևան, Օտյան 53/2/՝ հայտը գրասենյակի միջոցով կառավարչին փոխանցելու (տրամադրելու) համար:
Ծանոթություն. ԳՈՒՅՔԱՀԱՐԿ - ՀՀ հարկային օրենսգրքում 29.08.2026թ. կատարված փոփոխությունների համաձայն, անհրաժեշտ է գնորդի կողմից հարկերը մարված լինելու մասին տեղեկանք ներկայացնել պետական գրանցում իրականացնող մարմնին՝ նոր գնորդի անունով իրավունքի պետական գրանցում կատարելու համար: Այսինքն, գույքի ձեռք բերողը կրում է պարտավորություն՝ պարտապանի անվամբ գույքահարկի գծով առկա բոլոր պարտավորությունների կատարման՝ պարտքերի վճարման համար, որից հետո նոր կգրանցվի նոր գնորդի սեփականության իրավունքը աճուրդով ձեռք բերված գույքի նկատմամբ:
Աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով՝ Սուրեն Վարդանի Բաղդասարյանի անվամբ «Արդշինբանկ» ԲԲԸ-ում բացված թիվ 2474403437770004 սնանկության հատուկ հաշվին՝ մինչև հայտ և/կամ ծանուցում ներկայացնելու պահը: Աճուրդն անցկացվում է բաց դասական եղանակով, աճուրդի հաղթող է ճանաչվում ամենաբարձր գինն առաջարկած մասնակիցը:
Աճուրդը կազմակերպվելու և անցկացվելու է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» N 116-Ն հրամանի համաձայն՝ հրամանով սահմանված կարգով՝ ներառյալ ՀՀ արդարադատության նախարարի 16 հունիսի 2025թ. թիվ 374-Ն հրամանով ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հրամանով սահմանված կարգավորումների:
Նշված իրավական ակտը հանդիսանում է աճուրդի կանոնակարգը:
Հայտի ձևը և աճուրդի կանոնակարգը անվճար կարող եք ստանալ սնանկության գործով կառավարչից յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:00-ից 18:00-ն՝

ք. Երևան, Հանրապետության փ. 67շ., թիվ 57 գրաս. տարածք հասցեով կամ սնանկության գործով կառավարչին տրամադրել էլեկտրոնային փոստի հասցե, որին կուղարկվի հայտը: Էլեկտրոնային հաղորդագրության ձևաչափը նախընտրելի է: Լոտը կարող է ուսումնասիրվել ցանկացած աշխատանքային օր 09:00-ից 18:00-ն ընկած ժամանակահատվածում՝ նախապես պայմանավորվածություն ձեռք բերելով սնանկության գործով կառավարչի հետ: Լոտը ուսումնասիրելու և աճուրդին առնչվող այլ հարցերով դիմել սնանկության գործով կառավարիչ Արմեն Մաթևոսյանին՝+374 96 224 228 հեռախոսահամարով կամ հաղորդագրությունը ուղարկել armen.matevosyan@lawconsult.am էլեկտրոնային փոստի հասցեին կամ այցելել ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փողոց, 67 շենք, թիվ 57 գրասենյակային տարածք հասցեով:

61-1. Աճուրդի անցկացման և հայտերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն.pdf

37441224254

armen.matevosyan@lawconsult.am

-